

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ
ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ՝

Վ. Այվազյան	ՀՀ Աժ-ի տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Տ. Դավթյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ա. Գրիգորյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ա. Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
Վ. Վարդանյան	ՀՀ քաղաքաշինության նախարար
Դ. Գեղջևա	Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի մշտական ներկայացուցիչ
Հ. Սարգսյան	«Տապան» էկո-ակումբ ՀԿ-ի նախագահ
Ս. Ադամյան	«Հասարակական էկոլոգիական դաշինք» ՀԿ-ի համակարգող
Ա. Վերմիշյան	«Բուրգ» բնապահպանական երիտասարդական ՀԿ-ի ներկայացուցիչ
Լ. Յագուբյան	«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
Ա. Իսկոյան	«Շրջակա միջավայրի իրավական պահպանության կենտրոն» ՀԿ-ի նախագահ
Ե. Մանվելյան	«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի նախագահ

Կ. Դանիելյան «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ, ԿԶԱԽ-ի քարտուղար, Ինստիտուցիոնալ կառավարման թեմատիկ ոլորտի համանախագահ

Հրավիրվածներ՝

Վ. Տերտերյան ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ, Ինստիտուցիոնալ և կառավարման ոլորտի թեմատիկ ոլորտի համանախագահ

Ս. Պապյան ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ, Էկոլոգիական թեմատիկ ոլորտի համանախագահ

Հ. Դարբինյան ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ

Գ. Բաղդյան ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ

Կ. Հարությունյան ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ, հոգևոր-մշակութային ոլորտի, գիտության և կրթության ապահովման ոլորտի թեմատիկ խմբի համանախագահ

Ա. Հովակիմյան ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ

Զ. Բաղդասարյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, սոցիալ-տնտեսական թեմատիկ ոլորտի համանախագահ

Գ. Մելքոնյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, սոցիալ-տնտեսական թեմատիկ խմբի համանախագահ

Կ. Արեյան Երևանի քաղաքապետի տեղակալ, Հասարակական-քաղաքական և ժողովրդագրական ոլորտի համանախագահ

Վ. Մովսիսյան ՀՀ Նախագահին առընթեր Սևանա լճի հիմնախնդիրների հանձնաժողովի նախագահ

Ք. Հոֆսթրա ԵԱՀԿ գրասենյակի ղեկավարի տեղակալ

Յու. Պողոսյան ՀՀ ազգային վիճագրական ծառայության խորհրդի անդամ

Տ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ, Հասարակական-քաղաքական և ժողովրդագրական թեմատիկ ոլորտի համանախագահ
Կ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ
Ա. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ
Հ. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ
Կ. Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության առաջատար մասնագետ
Ա. Գասպարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության փորձագետ
Վ. Կաթոյան	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի միջազգային կազմակերպությունների վարչության պետ
Ն. Զաստուխովա	ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակազմի ՄԱԿ-ի բաժնի վարիչի պաշտոնակատար
Մ. Դավթյան	ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի կրթության ազգային ինստիտուտի դաստիարակության և լրացուցիչ կրթության բաժնի վարիչ
Ռ. Հարությունյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի ՓՄԲՀ վարչության առաջատար մասնագետ
Գ. Պողոսյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն

Բ. Գաբրիելյան	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի տնօրեն
Դ. Բոբերգ	ՄԱԿ-ի զարգացման ծրագրի մշտական ներկայացուցչի տեղակալ
Ա. Մարտիրոսյան	ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի Բնապահպանական ծրագրերի համակարգող
Վ. Զիջյան	ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի Սոցիալ-տնտեսական ծրագրերի համակարգող
Գ. Արզումանյան	ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի Բնապահպանական ծրագրային քաղաքականության խորհրդատու
Ա. Բակունց	ՄԱԿ-ի զարգացման գրասենյակի Ժողովրդական կառավարման ծրագրերի համակարգող
Մ. Պելեաի	Մասնագետ-հետազոտող, ՄԱԶԾ Եվրոպայի և ԱՊՀ տարածաշրջանային գրասենյակի ներկայացուցիչ
Թ. Աբրահամյան	«Արագա» ՀԿ-ի նախագահ, Հասարակական-քաղաքական և ժողովրդագրական թեմատիկ ոլորտի համանախագահ
Վ. Սաֆարյան	«Հայրենական ապրանք արտադրողների միության» նախագահ, Սոցիալ-տնտեսական թեմատիկ ոլորտի համանախագահ
Ն. Պեպանյան	«Լուսաստղ» ՀԿ-ի նախագահ, Սոցիալ-տնտեսական թեմատիկ ոլորտի համանախագահ
Հ. Խառատյան	«Հազարաշեն» ՀԿ-ի նախագահության անդամ, հասարակական-քաղաքական և ժողովրդագրական ոլորտի համանախագահ
Հ. Պողոսյան	ՀՀ ԱԺ-ի գյուղատնտեսական և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովի փորձագետ
Գ. Առաքելյան	ՀՄԿԶ ասոցիացիա
Լ. Ներսիսյան	ՀՄԿԶ ասոցիացիա, երիտասարդ թևի նախագահ

Լ. Սարգսյան	ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի ազգային կոմիտեի ներկայացուցիչ
Վ. Համազասպյան	Գելիոֆիկացիայի ծրագրի ղեկավար
Թ. Մանասերյան	ԵՊՀ-ի պրոֆեսոր
Ք. Հովհաննիսյան	«ԱկվաԷկ» միության նախագահ
Ի. Զառաֆյան	«Էկոլուր» ՀԿ-ի նախագահ
Մ. Հակոբյան	Սեյսմոլոգների միության անդամ
Կ. Մովսիսյան	Գորիսի երիտասարդական միության նախագահ
Ժ. Թելյան	«Կանայք հանուն ժողովրդավարության» ՀԿ-ի ներկայացուցիչ
Ն. Վարդանյան	«Հայաստանի անտառներ» ՀԿ-ի նախագահ
Մ. Գազարյանց	«Բիոմոդ» ՀԿ-ի նախագահ
Հ. Ասլանյան	«Շողեր» միության նախագահ
Ս. Այվազյան	«Transparency International Armenia» ՀԿ-ի տնօրեն
Հ. Զավադյան	Ագրոբիզնեսի զարգացման հետազոտությունների հիմնադրամի նախագահ

1. Նիստի բացում՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի ողջունի խոսքը

2. «Կայուն զարգացում և հավասար հնարավորություններ» 2011 թվականի Գլոբալ Մարդկային Զարգացման Զեկույցի շնորհանդես

(Դ. Գերչևա, Մ. Պելեհի, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն Հայաստանում ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի մշտական ներկայացուցիչ Դ. Գերչևայի և Մասնագետ-հետազոտող, ՄԱԶԾ Եվրոպայի և ԱՊՀ տարածաշրջանային գրասենյակի ներկայացուցիչ Մ. Պելեհիի զեկույցները:

3. «Ռիո +20» Կայուն զարգացման համաշխարհային գագաթաժողովի նախապատրաստման գործընթացի մասին

(Ա. Հովակիմյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Հովակիմյանի զեկույցը:

4. «Կայուն զարգացման առաջընթացը և խնդիրները Հայաստանում» գնահատման զեկույցի սկզբունքները և մոտեցումները

(Կ. Դանիելյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ ընդունել ի գիտություն «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Կ. Դանիելյանի զեկույցը:

5. Այլ հարցեր

(Ա. Վերմիշյան, Հ. Սարգսյան, Ի. Զառաֆյան, Մ. Հակոբյան, Տ. Սարգսյան)

1) Ընդունել ի գիտություն՝

ա. «Բուրգ» բնապահպանական երիտասարդական ՀԿ-ի ներկայացուցիչ Ա. Վերմիշյանի ելույթը՝ ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 627-Ն որոշման վերանայման հնարավորության մասին,

բ. «Տապան» էկո-ակումբ» ՀԿ-ի նախագահ Հ. Սարգսյանի ելույթը՝ էներգախնայողության ոլորտում իրականացվող միջոցառումների գործընթացում ձեռք բերված հաջողությունների արձանագրման, էներգախնայողության գաղափարախոսության քարոզչության, բնակչության տեղեկացվածության, իրազեկվածության մակարդակի ցածրության, ինչպես նաև տեղական կազմակերպությունների հետ համագործակցության մասին,

գ. «Էկոլուր» ՀԿ-ի նախագահ Ի. Զառաֆյանի ելույթը՝ հաջորդ ազգային զեկույցում կայուն զարգացման ոլորտների (հումքային, հողային, ջրային ռեսուրսների օգտագործման (խնայողության), սակավաջրության, սողանքային հողային տարածքների ավելացման, անտառային հողերի ընդհանուր մակերեսի նվազման և այլն) գծով կոնկրետ հիմնախնդիրների ներառման մասին,

դ. Սեյսմոլոգների միության անդամ Մ. Հակոբյանի ելույթը՝ տարածաշրջանային սեյսմիկ տեխնածին վտանգների, մասնավորապես, 2011 թվականի մարտի սկզբներին Ադրբեջանի տարածքում նավթարդյունահանման արդյունքում առաջացած երկրակեղևի ճեղքի առկայության մասին.

2) հանձնարարել ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Ա. Հովակիմյանին՝ Սեյսմոլոգների միության անդամ Մ. Հակոբյանի ներկայացրած հարցը Ժնևում կայանալիք համաժողովում դարձնել քննարկման առարկա:

3) հանձնարարել «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Կ. Դանիելյանին՝ կազմակերպել «Ռիո+20» քննարկումներ՝ «Ռիո+20» գնահատման զեկույցի պատրաստման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ